Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի
մարտի 11-ի N 122 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

1.	Ծրագրի նպատակը	Արևային ջրատաքացուցիչների տեղադրում, որը թույլ կտա բնակիչներին ապահովել մշտական տաք ջրով՝ առանց լրացուցիչ ծախսեր կատարելու և այլ էներգակիրներ կիրառելու:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Նիդեռլանդների «Մենսենքինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդեռլանդեր, Spoorlaan 1a, 8071 BN Nunspeet)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե՝ ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան՝ 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Լոռու մարզ, Գյուլագարակի համայնքի Կուրթան բնակավայր, համայնքային զարգացման բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	9,257,600 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքի Կուրթան բնակավայրի կարիքավոր ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի մարտի 15-ից մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2020 թվականի մարտի 15-ից մինչև 2020 թվականի հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի Գյուլագարակի համայնքի Կուրթան բնակավայրում 20 ընտանիքի բնակելի տներում մեկական արևային ջրատաքացուցիչների տեղադրում՝ 9,257,600 դրամ ընդհանուր արժեքով:

		Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու փուլով՝ առաջին փուլում տեղադրել 8 հատ արևային ջրատաքացուցիչ, երկրորդ փուլում՝ առնվազն 12 հատ արևային ջրատաքացուցիչ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներկայումս կնքվել է 8 ընտանիքների համար ջրատաքացուցիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների պայմանագիր՝ 2,513,333.33 դրամ ընդհանուր արժողությամբ: Առաջին փուլն ավարտելուց հետո նախատեսվում է ուսումնասիրել և ծրագրի շահառու դարձնել ևս առնվազն 12 կարիքավոր ընտանիքներ՝ մինչև ծրագրով նախատեսված բյուջեի ամբողջական սպառումը, և կնքել համապատասխան պայմանագիր:
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Լոռու մարզի Գյուլագարակի խոշորացված համայնքի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում «Մենսենքիդերեն» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ